նէր և վայելում էր նորա գովեստները։ Դորա արժանաւորութիւնը, իւր արդարասիրութիւնը, տկարներին պաշտպանելը, բռնաւորներին պատժելն էր։ Այդ կողմերում, եթէ մի առաջնակարգ մարդ բարիք էլ չ'անի, չարիք էլ չ'անի, դարձեալ մեծ գովեստների կ'արժանանայ։ Բայց Հիւսէին աղէն դրանց դասակարգիցը չէր։ Թադէի վանքի վանահայրը նոյնպէս գովում էր դորան. «Հիւսէին աղէն, ասում էր վարդապետը, —եթէ չը լինէր՝ մենք մեծ հարուածների պիտի ենթարկուէինք։ Անցեալ Շէյխ Իբադուլլահի արշաւանքին գիւղ չը մնաց այս կողմերը, որ չը թալանուէր, ամենի հոտերը և նախիրները քըշեցին տարան։ Զը նայեած որ մեր վանքը Մագուայ խանութեան մէջն է ընկնում. բայց նորա խաները խլել են վանքի երկու գիւղերը, հողերը, ջուրը և վանքի խցերը ամբար են շինել իրանց համար.*) բայց Հիւսէին աղի շնորհիւը մենք բոլորովին անվնաս մնացինք և մի մաղ անգամ չը կորցրինք։

Նոյեմբերի 7-ին առաւօտ. գեղածիծաղ արևով

---

*) Վարդապետը պատմում էր նաեւ, որ ինքը քաղաքիցս դիմել է Էջմիածնա Ս. Աթոռին եւ եղելութիւնը նորան յայտնելով, խնդրել է նորա պաշտպանութիւնը, վանքի սեպհական կալուածները վերադարձուցանելու համար, բայց մինչեւ այժմ Աթոռը ոչինչ տնօրինութիւն չէ արել։